## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքի aknaghbyur.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<25>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 32 - Ն

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և 32-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2018 թվականի տեղական բյուջեի եկամտային մասում՝ ավելացնել 419350 դրամ, որից՝ գույքահարկ փոխադրամիջոցներից 350000 դրամ և համայնքի սեփականություն հանդիսացող հողերից վարձավճար 69350 դրամ, ծախսը կատարել 01-01-01-51 հատվածի 4111 հոդվածով 419350 դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝(3) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

Թաթուլ Շահնազարյան
Արագ Միրզոյան
Էմիլ Դոլմազյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Դոլմազյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ Ակնաղբյուր համայնք aknaghbyur.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<25>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 33- Ա

### 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Պահուստային ֆոնդից 75000 ( յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ հատկացնել 4729 հոդվածին:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝(3) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

Թաթուլ Շահնազարյան

Արազ Միրզոյան

Էմիլ Դոլմազյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Դոլմազյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքի aknaghbyur.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<25>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 34 - Ա

ԱԿՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-006-0118-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,11958 ԵՎ 0.00874 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՈՒՆԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ակնաղբյուր համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության՝ 11-006-0118-0001 ծածկագրով 0,11958 և 0,00874 հա վարելահողերը, քարտեզում սխալմամբ գրվել է որպես ֆիզիկական անձի սեփականություն՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. 11-006-0118-0001 ծածկագրով 0,11958 և 0,00874 հա հողամասերը չեն համարվում ֆիզիկական անձի սեփականություն, այլ համարվում են Ակնաղբյուր համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող:
2. 11-006-0118-0001 ծածկագրով 0,11958 և 0,00874 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերի նկատմամբ կատարել պետական գրանցում համայնքի անունից:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝(3) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

Թաթուլ Շահնազարյան

Արազ Միրզոյան

Էմիլ Դոլմազյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԴՈԼՄԱԶՅԱՆ